Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
սեպտեմբերի 30 -ի N 575 - Ա
որոշման

«ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում կառուցվել է 14 հատ բնակելի տուն՝ անապահով ընտանիքների համար: Անապահով ընտանիքների ընտրությունը իրականացվել է Արմավիրի մարզի Նալբանդյան համայնքի ղեկավարի կողմից մշակված կարգով: Սույն ծրագրով նախատեսվում է բնակելի տների անապահով ընտանիքների համար կենցաղային տեխնիկայի գնում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցներ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երեւան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Նալբանդյան համայնք, սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 5,441,333.05 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյան համայնքի թվով 14 նույնատիպ բնակելի տների շահառուներ

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2020 թ. սեպտեմբերի 10-ից մինչև նոյեմբեր 10-ը 2020 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյան համայնքի թվով 14 նույնատիպ բնակելի տների շահառուների համար գնել կենցաղային տեխնիկա: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2020 թ. սեպտեմբերի 10-ից, մինչև նոյեմբեր 10-ը 2020 թ. Արժեքը՝ 5.441.333,05 դրամ ՀՀ դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանք-ների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախատեսվում է կենցաղային տեխնիկայի գնում համաձայն 07.08.2020 թ. N ԱՎ-ԿՏ -01/20 կնքված պայմանագրի թիվ 1 հավելվածի: Արժեքը կազմում է 5,441,333.05 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու եւ գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ